

Մարզպետն այցելեց Աշտարակի տարածաշրջանի համայնքներ

Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը շարունակում է այցելությունները մարզի համայնքներ: Հերթական այցը Աշտարակի տարածաշրջանի համայնքներում էր: Նա եղավ Նոր Ամանոսում, Արուճում, Նոր Եղեսիայում, Կոշում:

Մարզի ղեկավարի հետ հանդիպման եկած բնակիչները բարձրացրին իրենց մտահոգող խնդիրները: Համատեղ քննարկվեցին առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերը: Նոր Ամանոսում Գաբրիել Գյոզալյանը այցելեց նաև դպրոց, ծանոթացավ աշխատանքային պայմաններին, կրթական գործընթացին:

Ի թիվս տարբեր հարցերի, առանձնացվեց ոռոգման ջրի մատակարարման հիմնախնդիրը, որը առկա է ինչպես այդ, այնպես էլ հարակից համայնքներում: Հարցի կարելիությունից ելնելով, Արուճի համայնքապետարանում մարզպետը խորհրդակցություն հրավիրեց, որին մասնակցում էին Շամիրամ ԶՕԸ-ի ղեկավարը, ոլորտի մասնագետները, ինչպես նաև՝ Նոր Ամանոս, Արուճ, Նոր Եղեսիա, Կոշ, Շամիրամ, Արագածոտն, Պարտիզակ, Ն. Բազմաբերդ համայնքների ղեկավարները:

Քննարկվեցին ոռոգման ջրի մատակարարման հետ կապված այն խնդիրները, որոնք հրատապ լուծում են պահանջում: Մարզի ղեկավարը նշեց, որ ջրամատակարարման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար համագործակցված աշխատանքներ են տարվում ՀՀ ԳՆ ջրային պետական կոմիտեի ղեկավարի և համակարգի պատասխանատուների հետ: Արդեն իսկ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ողջ տարվա ընթացքում ջրամատակարարումը լիարժեք իրականացնելու համար: